ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի Արմեն Հովհաննիսյանի անվան

Համար 194 հիմնական գպրոց

Երգչախմբի ծրագիր

2023-2024 ուստարի

Խմբավար՝ Հեղինակ Մկրտչյան

Երգչախմբի ծրագիր
Բացատրագիր

Երգչախմբի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից:

1.Թեմայի անվանումը, ժամաքանակը
2.Նպատակները
3.Խնդիրները
4.Վերջնարդյունքները
5.Բովանդակություն

Շաբաթական 8 ժամ
Տարեկան 304 ժամ, 38 շաբաթ
Խմբակի ղեկավար՝ Հեղինե Մկրտչյան

Բացատրագիր	Դպրոցական երգչախումբը համարվում է արտադասարանական գեղարվեստական աշխատանքի ամենակարևոր տեսակներից մեկը: Երգչախմբի պարամունքները նպաստում են սովորողների երաժշտական ընդունակությունների զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և երգչական հմտությունների ամրապնդմանը: Երգչախմբի ընթացքում զարգանում են նաև սովորողների բարոյական որակները՝ մեկը մյուսին լսելու, հարգելու, օժանդակելու, համագործակցելու, ապրումակցելու կարողությունները և պատասխանատվության զգացումը, որոնք շատ կարևորվում են նոր ՀՊՉ-ում: Երգը ներգործում է սովորողի ներաշխարհի վրա, հուզազգացմունքային լիցք է տալիս նրան: Երգեցողության ընթացքում մասնակիցները կարողանում են ազատ արտահայտել իրենց ապրումները, հոգեվիճակը,, լիցքաթափվում են, ստանում մեծ հաճույք և բավականություն: Երգչախմբի պարապմունքներին կարող են մասնակցել բոլոր դպրոցականները, սակայն հաշվի առնելով նրանց

	տարիքային առանձնահատկությունները և ձայնածավալը, խորհուրդ է տրվում ստեղծել տարբեր տարիքային խմբերի երգչախմբեր:
Նպատակները	• Զնավորել և զարգացնել խմբի անդամների երաժշտագեղագիտական ճաշակը • Զարգացնել մասնակիցների երգչական ունակությունները՝ ճիշտ ձայնարտաբերում, շնչառություն, առոգանություն, ինտոնացիոն մաքրություն, • Նպաստել միաձույլ հնչողությանը՝ ապահովել անսամբլային հնչողությունը, • Զարգացնել ունիսոն երգեցողության կարողությունը, • Ներկացնել ազգային խմբերգային երաժշտության պատմությունը և այսօր ՀՀ-ում գործունեություն ծավալող հայտնի երգչախմբերի ստեղծագործական գործունեությունը, • Արժևորել ազգային և համաշխարհային բարձրարժեք խմբերգային կատարումները:
Խնդիրները	• Ստեղծել խմբավարի և խմբի մասնակիցների սերտ համագործակցություն, անխզելի կապ, ընդհանուր նպատակադրում, • Նպաստել խմբի կատարողական մակարդակի բարձրացմանը • Զարգացնել երգելու կուլտուրան, նպաստել արտահայտիչ երգեցողությանը • Պահպանել և զարգացնել սովորողների երգչային ձայնը, հաշվի առնել նրանց տարիքային առանձնահատկությունները • Զնավորել և զարգացնել մասնակիցների վարքագիծը պարապմունքների և ելույթների ժամանակ: • Ստեղծել խմբում բարի և համագործակցային մթնոլորտ:

Վերջնարդյունքները	• Կատարի բազմաթիվ միաձայն և բազմաձայն երգեր • Կատարի երգերը մաքուր ինտոնացիայով, • Արտահայտիչ, • Համապատասխան տեմպով, • Անհրաժեշտ նրբերանգներով, • Բառերի հստակ առոգանությամբ, • Անսամբլի զգացողությամբ: • Ակտիվ մասնակցի դպրոցական և համայնքային միջոցառումներին, • Դրսևորի հետաքրքրություն կենդանի կատարումների նկատմամբ, այցելի համերգասրահներ: • Դառնա հայ ազգային երգարվեստի կրողն ու սերունդներին փոխանցողը:
Առաջին կիսամյակ **1-2 շաբաթ**	Ծանոթացնել երաժշտության հետ: Մանրակրկիտ ուսումնասիրել աշակերտների երաժշտական ունակությունները՝ լսողությունը, ռիթմի զգացողությունը, ձայնի որակը և այլն:
3-5 շաբաթ	Աշակերտներին ծանոթացնել երգչախմբային ձայներին, ցանկալի է կրկներգի կատարմամբ: Երեխաներին սովորեցնել երգեցողության կանոները:Ուսուցանել <<Իմ ուսուցիչը >>երգը, խոսք.Ն.Միքայելյան, երեժշտություն Ռ. Պետրոսյան:
6-8 շաբաթ	Կատարել ձայնավարժություններ՝ երգել նոտաներով, հավասար ուժգնությամբ՝ Բ-ի վրա: Նույն հնչյունը կարելի է կրկնել տարբեր ձայնավորներով:Ամրապնդել <<Իմ ուսուցիչը>> երգը: Ուսուցանել <<Էրեբունի – Երևան>> երգը, խոսք և երաժշտություն Ս. Վարդանյան:
26-27 շաբաթ	Կատարել ձայնավարժություններ, սոլմիզացիա: Ամրապնդել<< Տղերքը, որոնք չկան>> երգը:

28-30 շաբաթ	Փոքրիկ երգիչները սովորում են խմբավարի ձեռքերի հիմնական շարժումներին՝ թե որն է ուշադրությունը, շունչ առնելը, երգի սկիզբը և ավարտը, նաև երգի նրբերանգների կատարումը: Կրկնել անցած երգերը:
31-33 շաբաթ	Կատարել ձայնավարժություններ: Ուսուցանել<< Խաղաղություն աշխարհին>> երգը, խոսք և երաժշտություն Մարինե Մարգարյան:
34-35 շաբաթ	Կատարել շնչառական վարժություններ, ձայնավարժություններ: Ամրապնդել <<Խաղաղություն աշխարհին>> երգը:
36-37 շաբաթ	Անցած երգերի կրկնություն:
38 շաբաթ	Պատրաստվել տարեվերջյան միջոցառման: